առիթ գժտութեան և խռովութեան ազգին և մխարանաց։ Ի հասանիլ այսր գրոյ 'ի Թադաւորական քաղաքն, Յակոբ Պատրիարք Նալեան, գլխաւորք ազգին եւ քահանայք վեց եկեղեցեաց սիրով ընկալան զխնդիր նորին. և գրեցին ինքեանք եւս գիր անդորրութեան, յորում տեսանի և պատճէն կտակի նորին բառ առ բառ օրինակեալ, յոր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան. զի համաձայն խորհրդոյ նորին զկնի մահուան իւրոյ դիցեն յԱթոռն Ըզթէոդորոս, զի 'ի կենդանութեան իւրոյ չկամէր ազգն տեսանել զայլ ոք յԱթոռ նորին։ Եւ առանձին գրով եւս ազգ արարին նմա, յԱստուած առնել ապաստան զտնօրէնութիւն այնր մեծի խնդրոյ՝ զի ինքն ամենաբարի կամօք իւրովք ընտրեսցէ և տնօրինեսցէ զարժանաւորն յօգուտ Ս. Աթոռոյն և 'ի միխթարութիւն համօրէն ազգին, միայն առ այժմ յանձնել Թէոդորոսի զկարեւոր գործս Աթոռոյն, զի առաւել հմտութեամբ վարժեսցի յայնս, (1743. Օգոստոս 30)։ Զայս գիր ընկալեալ Թէոդորոսի Եպիսկոպոսի՝ դարձ արար յԵրուսաղէմ։

Նախ քան զմեկնիլ Գրիգորի Պատրիարքի 'ի Կոստանդինուպօլսոյ (1740), համաութեամբ Յովհաննու Պատրիարքի կարգեալ էր զՅակոբ վարդապետ Նալեան փոխանորդ իւր անդ, արթնութեամբ լինել վերահասու բովանդակ գործոց Աթոռոյն Երուսաղէմի, եւ 'ի սմին ամի (1746. Փետրվար 14) առաքեաց առ Գրիգոր զտումար հաշուոյ Աթոռոյն, և վերստին հաստատեցաւ 'ի նոյն պաշտօն։ Եւ 'ի սորա ժամանակս Նորոգեցաւ վանքն Իւսկիւտարու արդեամբ Ս. Աթոռոյն, որպէս յայտ առնէ արձանագրութիւնն եղեալ 'ի վերայ դրան, օրինակ զայս։

Ի հիմանէ նոր շինեցաւ յարկս վերնատնօք, և միջնատնօք, և ներքնատնօք արդեամբք Տ. Գրիգորի եւ Տ. Յակոբայ Պատրիարքաց Ս. Երուսաղէմի և Կոստանդինուպօլսոյ, 'ի վայելումն նոցա, և համայն բարեկամաց նոցա, և Ս. Աթոռոյն Ջատագովչաց, անծախ և անքակ, յիշատակ Ս. Յակոբայ որ յԵրուսաղէմ. որք քակեն կամ ծախեն՝ զմասն Յուդայի առցեն։

Ի սմին ժամանակի դարձեալ տաղտկացեալ էին վանականք երից ազգաց 'ի Բեթղեհէմ յերեսաց Արաբացի Ֆէլլահաց. զի սոքա մշանջենաւոր սովորութիւն արարեալ